

Անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում

Գեորգ Հայրապետյան – ՀՀ ԱՆ անձնական տվյալների
պաշտպանության գործակալության պետ

ԱՏՊ օրենսդրությունը

Անձնական տվյալների պաշտպանության
մասին նոր օրենքն ուժի մեջ է մտել 2015
թվականի հուլիսի 1-ից:

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը

ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ կառավարության՝ 2015թ.-ի հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ ճանաչվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմին:

Անձնական տվյալները

Անձնական տվյալ – ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը

Անձնական կյանքի տվյալ – անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ

Անձնական տվյալները

Կենսաչափական անձնական տվյալ – անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ

Չատուկ կատեգորիայի անձնական տվյալ – անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ

Անձնական տվյալները

Հանրամատչելի անձնական տվյալներ - տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ

Օրինականության սկզբունքը

1. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ:

2. Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

ՉամաչափուԹյան սկզբուԼները

1. Տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:
2. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար:
3. Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ:
4. Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:
5. Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար:

ՋավաստիոԼԹյան սկզբունքը

1. Մշակվող անձնական տվյալը պետք է լինի ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմացված:

Տվյալների մշակման հիմքերը

1. Օրենքներով ուղղակիորեն նախատեսված լինելը
2. Համաձայնությունը
3. Հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը

Համաձայնության չափանիշները

1. «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը»
2. «ազատ տրված»
3. «որոշակի»
4. «տեղեկացված»

**Եվրամիության դատարանի 2014թ. մայիսի
13-ի C-131/12 որոշումը**

Մոռացված լինելու իրավունք

Ջիշելու պարտականություն

Խոսքի ազատության եւ անձնական կյանքի պաշտպանության սահմանները

- Լրագրողական ազատության սահմանները
- Հանրային շահ
- Ողջամիտ հրապարակում

Խոսքի ազատության եւ անձնական կյանքի պաշտպանության սահմանները

- Պատմություն մի պաշտոնյայի մասին
- Պատմություն կես տարեկան մի երեխայի մասին
- Պատմություն ակնաբուժական մի հաջողված դեպքի մասին
- Պատմություն փնտրվող մի երեխայի մասին
- Պատմություն դատապարտված մի աղջկա մասին
- Պատմություն սոցիալական հաղորդումների մասին

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, 2019